# Ակադեմիայի հյուրն էր Նոբելյան մրցանակի դափնեկիր Աարոն Չեյխանովերը

Նոբելյան մրցանակի դափնեկիր Աարոն Չեյխանովերը ՀՀ ԳԱԱ-ում հանդիպեց Հայաստանի գիտական հասարակայնության հետ և ներկայացրեց բժշկագիտության զարգացման միտումները: ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը Աարոն Չեյխանովերին առաջարկեց համագործակցել ՀՀ ԳԱԱ-ի հետ: «Ուրախ կլինենք համագործակցության եզրեր գտնել Ձեզ հետ և պատրաստ ենք հրավիրելու Ձեզ՝ ծանոթանալու մեր գիտությանը»,- ասաց ՀՀ ԳԱԱ նախագահը: Հանդիպման ընթացքում ելույթ ունեցան նաև ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Էմիլ Գաբրիելյանը և Արմեն Գալոյանը:

Աարոն Չեյխանովերը առաջին անգամ է Հայաստանում: Նա ժամանել է Մխիթար Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի հրավերով: Համալսարանում նա հանդես է եկել «Դեղագործությունը XXI դարում. պատրաստ ենք արդյոք բուժել բոլոր հիվանդությունները» զեկույցով:

Աարոն Չեյխանովերը Իսրայելի Գիտությունների և մարդասիրության ակադեմիայի, Եպիսկոպոսական գիտությունների ակադեմիայի անդամ է, ԱՄՆ Գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ:

2004 թ. Աարոն Չեյխանովերը Ավրամ Հերշկոյի և Իրվին Ռոուզի հետ արժանացել է Նոբելյան մրցանակի՝ ապիտակոցների ուբիկվիտին միջնորդավորված անկման հայտնագործության համար:

*ՀՀ Տեղեկատվական-վերլուծական կենտրոն*